«Շիրակացու ճեմարան»
Միջազգային գիտակրթական համալիր

Ազգանուն, անուն, դպրոց_____

Ընդունելության քննություն մաթեմատիկայից 4-5-րդ դասարան 23.06.23

Մինչև թեստը սկսելը խնդրում ենք ուշադիր կարդացեք այս հրահանգները

- Գրեք Ձեր անունը և դպրոցը այս էջի վերևում:
- Պատասխանեք թեստի բոլոր հարցերին, օգտագործելով միայն *կապույտ կամ սև գրիչ.* կարող եք այն վերցնել թեստը վերահսկողից: Յուրաքանչյուր խնդրի լուծում գրեք խնդրի ներքևում հատկացված տեղում:
- Մի բացեք մետաղական ամրակները: Եթե հաշվարկների կամ նշումների համար լրացուցիչ տեղի կարիք ունեք, օգտագործեք էջի հակառակ կողմը:
- Խնդրում ենք գրեք կոկիկ և ընթեռնելի, գծագրերը գծելիս օգտագործեք քանոն և մատիտ:
- Քննության առավելագույն միավորը 20-ն է, իսկ տևողությունը՝ 120 րոպե:

Մաղթում ենք հաջողություն

1. Քանի՞ հարյուրյակ է պարունակում 42768 թիվը: (0,5 միավոր)

Պատասխան՝_____

2. Գտի՛ր ամենափոքր քառանիշ և ամենամեծ եռանիշ թվերի տարբերությունը: (0,5 միավոր)

Պատասխան՝_____

3. Որքանո՞վ կփոքրանա թիվը, եթե նրա գրության հազարյակների կարգում գրված 6 թվանշանը փոխարինվի 2-ով: (0,5 միավոր)

Պատասխան՝_____

4. Գտի՛ր 35 և 87 թվերի միջև եղած բոլոր բնական թվերի քանակը : (1 միավոր)

Պատասխան՝_____

5. Գտի՛ր այն եռանիշ թիվը, որը պատիկ է 5-ին, տասնավորը 5 անգամ փոքր է միավորից, թվանշանների գումարը 12 է: (1 միավոր)

Պատասխան՝_____

6. Գրի՛ր այն թվանշանները, որոնք տեղադրելով աստղանիշի փոխարեն՝ կստանաս անհավասարություն. 9կմ 40դմ > 9կմ * մ (1 միավոր)

Պատասխան՝_____

7. Կատարի՛ր գործողությունը և արժեքն արտահայտի՛ր կիլոգրամներով: (1 միավոր)

3 տ 376 կգ +2 տ 6ց 24 կգ =_____

8. Արտահայտի՛ր 12ժ 25ր-ն րոպեներով: (0,5 միավոր)

Պատասխան՝_____

9. Ուղղանկյան պարագիծը 96 սմ է: Հաշվի՛ր այդ ուղղանկյան մակերեսը, եթե նրա երկարությունը 12 սմ-ով մեծ է լայնությունից: (1,5 միավոր)

Պատասխան՝_____

10. 2400 և 80 թվերի քանորդը մեծացրու 25 և 4 թվերի արտադրյալով: Կազմի՛ր արտահայտություն և հաշվի՛ր դրա արժեքը: (1միավոր)

Պատասխան՝_____

11. Դի՛ր փակագծերն այնպես, որ ստացվի ճշմարիտ հավասարություն: (0,5 միավոր)

$35 \cdot 145 - 125 : 5 = 35 \cdot 4$

Պատասխան՝_____

12. Տրված կոտորակներից առանձնացրո՛ւ կանոնավոր կոտորակները և դասավորի՛ր աճման կարգով: (1 միավոր)

$\frac{6}{7}$; $\frac{5}{7}$; $\frac{8}{7}$; $\frac{7}{7}$; $\frac{1}{7}$; $\frac{9}{7}$; $\frac{3}{7}$:

Պատասխան՝_____

13. Հաշվի՛ր արտահայտության արժեքը: (1,5 միավոր)

610 • (36404 – 6356) - 17080 : 56 +1089

Պատասխան՝ _____

14. Լուծի՛ր խնդիրը: (1 միավոր)

Անհրաժեշտ է 123 լ հյութը տեղավորել 5լ տարողությամբ տուփերի մեջ: Քանի՞ տուփ է անհրաժեշտ այդ հյութն ամբողջովին տեղավորելու համար:

15. ա) Գտի՛ր այն թիվը, որի (1 միավոր)

$\frac{1}{4}$ մասը 15 է, _____ $\frac{1}{10}$ մասը 20 է,_____

բ) արտահայտի՛ր տրված միավորներով. (1 միավոր)

$\frac{3}{5}$ տ = կգ , $\frac{3}{8}$ օր= ժ

16. Լուծի՛ր խնդիրը: (2,5 միավոր)

Ուղղանկյունաձև հողամասի մակերեսի $\frac{2}{5}$ մասը կազմում է այգին, $\frac{1}{5}$ մասը կազմում է ծաղկանոցը, իսկ մնացած մակերեսի $\frac{1}{4}$ մասը կամում է բանջարանոցը: Որքա՞ն մակերես է զբաղեցնում բանջարանոցը, եթե այդ հողամասի երկարությունը 150 մ է, իսկ լայնությունը 2 անգամ պակաս:

Պատասխան՝ _____

17. Համառոտագրի՛ր և լուծի՛ր խնդիրը: (2,5 միավոր)

Երկու քաղաքներից, որոնց հեռավորությունը 800կմ էր, միաժամանակ իրար ընդառաջ շարժվեցին երկու գնացքներ: Առաջին գնացքը շարժվում էր 45կմ/ժ արագությամբ, իսկ երկրորդ գնացքը՝ 10կմ/ժ արագությամբ ավելի: Շարժումը սկսելուց քանի՞ ժամ հետո նրանց միջև հեռավորությունը կլինի 200 կմ:

Պատասխան՝ _____

18. Ամսվա օրերի եղանակային փոփոխման մասին նկարագրվում է հավասար մասերի բաժանված աղյուսակ-տրամագրի միջոցով: Ուսումնասիրի՛ր տրամագիրը և ամբողջացրո՛ւ մտքերը: (1,5 միավոր)

Սնվելու	Ա	րև	ոտ
	Մռայլ	Քա	մոտ

ա) Ամենաքիչը եղել են_____օրերը:

բ) Արևոտ օրերը կազմում է ամսվա օրերի _____ մասը:

գ) Հավասար քանակով եղել են_____ և _____օրերը: